

բառս գտնելով Հայոց Եկեղեցիին մէջ՝ Եզ-
 ձեր կեղծեր է հղածը, ու այդպէս ալ ան-
 ժանացե՛ր: — Ազաջո՛յց. Որովհետեւ «Ա-
 դիշ»-ի վրացերէն Ձեռագիրը Սահակ-Մես-
 րոպեան զպրոցէն շա՛տ առաջ գոյութիւն
 ունեցող հայերէն նոր կտակարանի մը
 թարգմանութիւնն է հղեր, և այլն: Բայց,
 Մ. Մինասեան մոռցեր է յիշելու՝ որ
 «Ադիշ»-ը Թ. զարու Ձեռագիր մըն է,
 ինչպէս նշանակած է Հարվըրթի Ուսուցչա-
 պետը, և անոր թարգմանութեան թուա-
 կանն ալ կը գնէ Չ. զարուն՝ իր ուրիշ մէկ
 գործին մէջ. (The old georgian version of
 the gospel of Marc, ներածութիւն էջ 15
 [Patrologia Orientalis t. xx, Fase. 3]: Հարկ
 է ընդունիլ ուրիշն՝ որ Սահակ-Մեսրոպեան
 զպրոցի աշխատութենէն ուղղակի օգտուած
 է վրացի թարգմանիչը, մանաւանդ որ թէ՛
 «հաստատուած»-ը (իր հայեցի նշանակու-
 թեամբը) և թէ՛ ուրիշ քանի մը բառական
 այն բայատարութիւնները՝ որոնք իրենց
 նիւթական առումներովը փոխադրուած են
 «Ադիշ»-ի մէջ, ԱՄԷ՛ՆԲՆ Ա՛Լ առհասարակ
 մեր սովորական և ընկալելի թարգմանու-
 թենէն չէ՛ն տարբերիլ բնաւ: Պէտք չիկայ
 աւելի առաջ երթալու. միայն, և թէ կը
 ներուի մեզի, կ'զգուշացնենք կոչնակի զի-
 տուն յօդուածագիրը, անհիմն ենթադրու-
 թիւններէ, յանուն պատմական ողջմտու-
 թեան. որպէսզի մեր ազգային-եկեղեցա-
 կան մատենագրութեան յայտնի իրողու-
 թիւնները չփոխանակուին մտացածին փա-
 տերու հետ, որոնցմէ յաճախ կը սիրէ
 տարուիլ Մ. Մինասեան, իր ազգագրա-
 կան յանդուգն յղացումներուն մէջ ալ(*):

Ե. Ե. Դ.

ԱՆԳԻՐ ԱՍՍՅՈՒԱԾՆԵՐ

(AGRAPHA)

Այս անտիք անունը, որ այժմուս բա-
 ներօ կը նշանակի, կը տուի ասորաբար այն
 սասցուածներուն և աստիքաբաններուն որոնք
 չեն զտնախոր մեզի ծանօթ Աւեստաններու մէջ,
 երկու տեսակ են ստոնք. ա) անոնք որ կարգ
 մը ձեռագիր աւեստաններու մէջ կը զտնախոր,
 անկցուած մեզի ծանօթներուն վրայ. և բ)
 անոնք որ հնազոյն քրիստոնէացի մասնագիտնե-
 ռու կողմէն մէջ քերտած են:

Տարակալուն գրուածներու հետաքննողն մը
 կը փառի նեխուկ մեկ ֆանի պատմիկները ո՛չ,
 քի բանասիրական նպատակով, ալ խորհելով քի
 կրնան նեստրիական և միւսնոյն տեսն շայն-
 կան ըլլալ: Անոնք առաջին դարեր կուզան.
 անոնցմէ շատերուն մէջ Աւեստանի ոգին կը
 նշուի: Հաւանաբար քերտուցի աստիքաբան-
 ներէ, որոնք առաջիններէ կուզային, հոս հոն
 ինկած կտորներ են ստոնք, խոստոված Աւես-
 տանիցներու գրչին: Սակայն՝ շինուածները այդ-
 քան շատ են որ դժուար է հարազատները որոշել:
 Կը մնայ զստոնք դասել իրենց արժեքին:

Այնպիսիքս հետաքննելու է

The Apocryphal New Testament, by M. R. JAMES Oxford, 1924.

ՏԻՐԱՆ ԱԲՂ. ՆԵՐՄՈՅԱՆ

1. Բէշա Ձեռագիրը, Մատթ. Ի. 28-ին
 յետոյ կ'ստեղծեն. — Բայց դուք փնտռեցէք
 պատիկութենէ մեծնալը, և մեծագոյնէ ա-
 ւելի փոքրագոյն ըլլալը: Եւ երբ ներս մտ-
 նէք և ճաշելու հրաւիրուիք՝ մի՛ հետա-
 մտիք բարձր տեղուոյն, մի՛ գուցէ քեզմէ
 աւելի երեւիլի մէկը ներս մտնէ և քեզ ճա-
 շի հրաւիրողը քեզ ըսէ. «Քիչ մ'աւելի
 վա՛ր իջիր», և դուն ամչնաս: Բայց եթէ
 հետամտիս դուն աւելի աննշան տեղուոյն՝
 և աւելի աննշան մէկը ներս մտնէ՝ քեզ
 ճաշի հրաւիրողը պիտի ըսէ քեզի. «Աւելի
 վա՛ր կ'իլի», և այս քեզի շահաւէտ պիտի
 ըլլայ: Հնն՝. Դուի. ԺԳ. 8-10:

2. Դուի. Զ. 4-ին ետք՝ Բէշայի Ձեռագիրը
 կ'ստեղծեն. — Նոյն օրը անունելով մարդ մը
 որ շարաթ օրը կ'աշխատէր, ըսաւ անոր.
 «Ա՛յ մարդ, եթէ դուն արդարեւ զիտեւ
 ինչ ընելի՛ր՝ երանի՛ր քեզի. բայց եթէ չես
 գիտեր՝ նոյնիկալ մըն ես և օրէնքի գէ՛մ
 մեղանշող մը:

(*) Ի միամտութիւն բնիկերոցներու՝ անօ-
 գուս չենք նկատեր զիտեւ տալ՝ որ Հարվըրթի
 Համալսարանին և իրեն աշխատակցող բնիկե-
 րուն որոշ նպատակն է, ինչպէս վերը յիշուած
 անգլիկներէն աւսումնասիրութեան խորագիրէն ալ
 կ'իմացուի, նոր կտակարանը Պաղեստինեան կոչ-
 ուած Բնագիրի մը համաձայն վերականգնել, և
 այդ գիտնականներուն միտքէն իսկ չէ անցած
 Սահակ-Մեսրոպեան զպրոցի գործը կատարածի տակ
 զնելու անտեղի վարկածը:

3. Մասք. Գ. 17-ին հսք՝ Գ. դարու լուսիններէն Վերելնէն ըստած Չեռագիրը կ'աւելցնէ. — Եւ երբ ան կը մկրտուէր՝ շուրէն մեծ լոյս շողաց շորս գին, այնպէս որ բոլոր հոն եկողները սարսափեցան:

(Ուրիշ ձեռագիրներու և գրողներու մեջ ալ կը գտնուի այս տողը):

4. Մարկ. ԺԶ. 3-ին «Գերեզմանին դռնէն քարը ո՞վ պիտի գլտարէ խօսիկն հսքը՝ Բաբելոնի և Չեռագիրը (Տորիկն) կ'աւելցնէ. — Բայց յանկարծ, օրուան երբորդ ժամուն խաւարը՝ պատեց ամբողջ երկրագունտը. և երկինքէն հրեշտակներ իջան, և յառնելով կենդանի Աստուծոյ փառքովը՝ վեր ելան, ու անմիջապէս լոյս եղաւ: Այն ատեն (կինները) գերեզմանին մօտեցան և տեսան որ քարը գլտարուած էր, վասնզի շատ խաչոր էր:

5. Մարկ. ԺԶ 14-ին հսք, Ե. դարու յունարէն երկարագիր մը, որ վերջերս գտնուած է Եգիպտոս, կ'աւելցնէ.

— Յետոյ ան երեւցաւ տասնմէկերուն, մինչ կերակուրի կը նստէին, և յանդիմանեց զանոնք իրենց անհաւատութեան և խտատարութեան համար. վասնզի չէին հաւատացած անոնց՝ որոնք տեսած էին զինք իր յառնելէն ետք: Աւանտք իրենք զիրենք արդարացուցին ըսելով. «Այս չարութեան և անհաւատութեան զարը Սասանի ներքեւ է, որ պիտը ոգիներու միջոցաւ չթողուր որ մարդիկ Աստուծոյ ճշմարիտ զօրութիւնը հասկնան. ուստի դուն այժմ արդարութիւնդ մեզի յայտնէ» ըսին անոնք Բրիտտոսի: Եւ Բրիտտոս ըսաւ անոնց. «Աստանի զօրութեան տարիներուն սահմանը լրացած է. բայց ուրիշ սոսկալի բաներ կը մօտենան մեզանչողներուն՝ որոնց համար ևս մահուան յանձնուեցայ, որպէսզի անոնք ճշմարտութեան դասան և այլևս չմեղանչեն. որպէսզի ժառանգեն հոգեւոր և անապական փառքն արդարութեան՝ որ երկնքումն է: Այլ զուք գացէք բոլոր աշխարհն», ետլին (Մրկ. 15):

Յետնիստակն ալ ծանօթ էր այս նախաւծին կէտը շատ ինչ տարբերութեամբ, Տրամաբանութիւնը շարքէն Պելագիոսի, ր. 15, որ կ'ըսէր թէ կարգ մը յունարէն ձեռագիրներու մեջ կը գտնուէր այս:

Ուրիշ աղբյուրներու մեջ պահուածներէն աւելեակ կարեւորները նիստեալներն են: —

1. Աւելի երանելի է տալ քան թէ առ-

նուլ: Պողոսակն մեջ բերուած՝ Գործք. Ի. 35,

2. Ուր որ գտնեմ՝ ձեզ հոն պիտի դասեմ:

Յիշուած Յուսիմնու վիպակն, Կղեմես Ա. Աղիսանդրացի և ուրիշներէ:

3. Մեծագոյն բաները խնդրեցէք և փոքրագոյններն ալ պիտի աւելցուին ձեզի. երկնային բաները խնդրեցէք, և երկրայիններն ալ պիտի աւելցուին ձեզի: Կը յիշեն Ուրիզմես և Կղեմ. Աղիսանդրացի

4. Փորձուած սեղանաւորնե՛ր կոչէք:

Կը յիշեն Կղեմ. Աղիսանդրացի և ուրիշներ: Ա. Թեա. Ե. 21-ը ատը մեկնուրիսն է:

5. Երկրորդ Թեալը Կղեմէնէ, Ե. 2-4 ունի: — Զի Տէրն ըսաւ. զուք պիտի ըլլաք զաններու պէս՝ գայլերու մէջ: Եւ Պետրոս պատասխանելով ըսաւ անոր. Ապա եթէ գայլերը պատառեն զանները՞. Յիսուս ըսաւ Պետրոսին. Թող զանները չվախանան զայլերէն. իրենց մեռնելէն վերջ: Դո՛ւք ալ մի՛ վախնաք անոնցմէ որոնք կ'սպաննեն ձեզ և ոչինչ կրնան ընել ձեզի, բայց վախցէք անկէ՛ որ ձեր մեռնելէն ետք, ազդեցութիւն կը գործէ հոգիի և մարմնի վերայ և զանոնք կրակէ զժոխքը կը նետէ:

6. Կղեմես Աղիսանդրացիէ ունի. — Խնչպէս որ Վաղեստիսեանները կ'ըսեն... Ասոր համար Փրկիչն ըսաւ. փրկուէ՛, դո՛ւն և հոգիդ:

7. Գիտարար ր. 8. զիտը կ'ըսէ. Մարք մը որ չէ փորձուած՝ արժանիք չունի:

Տերտրադիանոս շարքէն Պելագիոսի. — Աշակերաները փորձուեցան՝ որովհետեւ քուն մտան, այնպէս որ լքեցին Տէրը երբ ան կը բռնուէր. նոյնիսկ այն՝ որ իրեն հետ կեցաւ և սուրբ գործածեց, երեք անգամ ուրացաւ զԱյն, վասնզի արդէն առաջուց ըսուած էր թէ ո՛չ որ, որ չէ փորձուած, պիտի չստանայ երկինքի արքայութիւնը:

8. Ուրիշներ շարքէն, Ներքող Գ. 3. — Տեղ մը կարգացի թէ Փրկիչը ըսած է — Խնդրի է թէ մէկը ինքզինքը Փրկիչի տե՛ղ զրած է, կամ թէ ի յիշուածութենէ խօսքերը յառաջ բերած է, կամ թէ արգետք ճշմարիտ է թէ ըսուած է — Ինչ և իցէ սակայն՝ Փրկիչն ինքնիսկ կ'ըսէ. «Այն որ ինձի մօտ է՝ կրակին մօտ է: Այն որ ինձմէ հեռու է՝ արքայութենէն հեռու է: (Իհիսնու ալ նոյնը կը յիշէ).

9. Կանոն Առաքելական Եկեղեցւոյի մեջ կայ հետեւեալ հետաքրքրական հաստատումք: — Պետութեան քառու կանոններ զնկու մէջ շա՛տ յատուա՛ջ դասինք. ճշգիւ նշանակե՛նք մարմնի և արեան մատուցման մասին ալ: Յովհաննէս քառու. մտայած էք, և՛ դրայրներ, և՛ բարգապետը հայն ու բաժակը ուղեց և զանոնք օրհնեց՝ ըսելով, «Այս է իմ մարմինս և իմ արիւնս» թող չտուաւ Ան որ սա՛ կինեը մեզի հետ ըլլան: Մարթա ըսաւ. «Մարթամբ՛ պատճառով էք այն, վարձողի Ան տեսաւ ներս մտալիլ: Մարթամ ըսաւ. «անկէ ետք այլևս չննդացի, վասնզի Ան ըսաւ մեզի տակէ առաջ թէ՛. Այն որ տկար է պիտի փրկուի զօրաւորին միջոցաւ: Այնպէս եմ յն. և յս. բնագիրները. իսկ աւարեաներ ունի. Ես չննդացի արգարև, այլ յիշեցի մեր Տիրոջ խօսքը և ուրախացայ. վասնզի զեղեք թէ Ան ըսաւ մեզի առաջուց, և՛ բնագիրներէ մեզի, թէ՛ այն որ տկար է պիտի փրկուի զօրաւորին միջոցաւ:

10. Կղև. Աղև. Սքր. Ե. 10. — Վասնզի մարգարէն կ'ըսէ. «Վ պիտի հասկնայ Տիրոջ մէկ առակը, բացի անկէ՛ որ իմաստուն է և զիտուն և կը սիրէ իր Տէրը: Վասնզի քիչերու տրուած է ամէն բան պարունակել. զի վայրագար չէ՛ր որ Տէրը հրամայեց աւետարանի մը մէջ. իմ գաղտնիքներս (խորհուրդներս) ինձի՛ և տանս որդիներուն համար են» (Եսայի.) (Կ'.) 16:

11. Կղև. Աղև. Սքր. — Վասնզի այդ խօսքերը նոյն ուժը ունին՝ ինչ որ ասոնք, որ Երբայեցեոց Աւետարանին մէջ գրուած են. — Ան պիտի չգաղըր փնտռելէ մինչև որ գտնէ, և գտած ըլլալով՝ պիտի սքանչանայ, և սքանչանալով՝ պիտի տիրէ, և տիրելով՝ պիտի հանգչի: (Նոյնը կայ նաև Ռաբիինոսի զտարած հին տարակրոն Աւետարանի մը մէկ սրբագրուած թերթի վրայ:)

12. Յերոնիմոս կ'ըսէ. — Երբայեցեոց Մատթէոսի աւետարանին մէջ այսպէս է. Մեր վաղուան հացը տուր մեզի այսօր: Այսինքն՝ «այն հացը՝ զոր պիտի տաս մեզի արքայութեանդ մէջ՝ այսօր տուր»:

13. Յերոնիմոս՝ Մատթ. ԺԲ. 13, կ'ըսէ. Այն աւետարանին մէջ՝ զոր նազարեանները (և Երիտնիկներ) կը գործածեն (և զոր ևս վերջերս Երբայեցերէնէ յունարէնի թարգմանած եմ, և չտաւր գոյն Մատթէոսի աւետարանին սկզբնագիրը կը նկատեն)

այն մարդը որ զօսացեալ ձեռք մ'ունելը՝ կը նկարագրուի իբր որմնագիր, որ սա՛ բառերով օգնութիւն կը հայցէ. «Ան որմնագիր մըն էի և ձեռքերովս ապրուստս կը ճարէի: Կ'աղաչեմ, Յիսուս, առողջութիւնս ինձի՛ վերագարձուր, որպէսզի ստորնաբար չմտրամ ուտեստիս համար»:

13. Որոգիներէ՛ Մատթէոսէ՛ շրջ գրաբանի մեջ՝ Առաքելական Եկեղեցւոյ մեջ բերուած՝ որ մեկ տարեկան է Գուլ. ԺԲ. 18-26ի: — Երկրորդ հարուստ մարդը ըսաւ անոր. «Տէ՛ր, ի՞նչ բարի բան կընամ ընել և ապրիլ: Ան ըսաւ անոր. «այ՛ մարդ, կատարէ՛ Օրէնքը և Մարգարէները: Ան պատասխանեց Անոր. պահած եմ: Ան ըսաւ անոր. «գնա՛, ծախէ՛ բոլոր ունեցածդ և բաշխէ՛ աղքատներու, և եկուր և հետե՛՛ ինձի»:

Եայց հարուստ մարդը սկսաւ դուրսը քերել, և տալիկ իրեն հաճոյ չթուեցաւ: Եւ Տէրն ըսաւ անոր. «Ի՞նչպէս կ'ըսես ուրեմն թէ պահած եմ Օրէնքն ու Մարգարէները: Կրուած է Օրէնքին մէջ. Սիրէ՛ դրացիդ (ընկերդ) քու անձիդ պէս, և, ան'ս ահա, քու եղբայրներէդ շատերը, Արբանձամի որդիներ, ազտոտ քուջեր հագած են և քաղցէ կը մեռնին, և քու տունդ՝ լեցո՛ւն է աղուոր բաներով, և տանդմէ ոչինչ դուրս կ'ելնէ անոնց համար: Ու Ան դարձաւ ու ըսաւ իր Սիմոն աշակերտին, որ իր քովը կը նստէր. Սիմոն, Յովհաննայի որդի, աւելի զիւրին է որ ուզուր ասեղի ծակէն մտնէ, քան թէ հարուստ մը՝ երկինքի արքայութիւնը:

